

# ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈՒԱՆ

(GUSTAVE FLAUBERT)

Ց Ե Լ Ի Բ Ա Բ

(Շարունակութիւն<sup>1)</sup>)

Փ Լ Ո Բ Ե Բ

„Pourquoi gonfler ce qui est  
plat!“.

Ց Լ Ո Բ Ե Բ,  
(«Բովար և Պէկիւչէնի մէջ»).

Ֆլորեն ու Բալզակը.—Բոման և գիտութիւն—Ֆլորենի տիպերը—Նրա  
աշխատասիրութիւնը—«Տիկին Բովարինո»—Այս գրքի նշանակութիւնը—  
Նրա պարունակութիւնը—Լմման իբրև զդակնական արարած.—Նրա հո-  
գեբանովթիւնը, նրա հիասթափումն ու լուսահատութիւնը—«Աւալամբօ»—Ն  
իբրև պատմական վէպ, —Նրա համառօտ բովանդակութիւնը—Մասթօն և  
Ավալամբօն, —Ֆլորենը բոմանտիկ-գիտնական է.—Նրա «ոչնչականութիւնը  
և հոռետեսութիւնը—Գեղարեւստի անդիմութիւն (impersonnalité de  
l'art):—Համառօտութիւն Ֆլորենի գործունէութեան».

## I

Եթէ նատուրալիսմի առաջին յարկը հաստատ հիման վրայ  
Բալզակը կառուցեց, երկրորդը Ֆլորենի դորձն էր:

<sup>1)</sup> Տես «Մուլճ» № 5.

«Տիկին Բովարի»-ի հեղինակը մեր գիտական դարի հարազատ դաւակին է։ Նրա ծնունդն ապացոյց էր այն մեծ օրէնքի ճշտութեանը, թէ մարդս ժամանակի արդինք է։

Ժամանակը պահանջում էր ճիշտ դիտումներ և անալիզ (լուծումն), և Բալզակն ու Ֆլորենը պիտի ծնուեին։

Նրկար, թէ չափազանց հետաքրքրական, կը լինէր ցոյց տալ, թէ ինչպէս սերտ կապւած է բումանը դիտութեան հետ։ Կարելի է ասել, որ դիտութեան զարդացման իւրաքանչիւր խոշոր շրջանը յեղափոխում է վիպասանութիւնը։

Մեր դարի բումանը, ճշմարիտ որ, ձեռ-ձեռի է տւած գնում դիտութեան հետ։

Կիւլիկի հրաշալի դիտուերը, Լամարկի, Սեանտ-Հիլէրի յափըշտակող ուսմունքը, բժշկական դիտութիւնների մշակումն մի նոր զարկ տւին բնադիտութեան զարդացման, և ծնւեց Բալզակը, որ կամեցւ մացնել բումանի մէջ դիտումներ և փորձ, այսինքն՝ դիտութեան առաջադիմութեան երկու անհրաժեշտ տարրերը։ Այս դիտումները «Մարդկութեան կոմեդիային-հեղինակին միջոց տւին ճշգրիտ նկարագրեր տալ իւր դիտած կեանքից։ Սեանտ-Հիլէրի թէօրիայով դրաւած, նա ճգնում էր մարդին էլ ենթարկել շրջապատող հանգամանքների ազդեցութեան, ինչպէս այդ արել էր Սեանտ-Հիլէրը կենդանիների վերաբերմամբ։

Սակայն այս վերջին մեծ ձեռնարկութիւնը չը յաջողեց Բալզակին, և չը յաջողեց մեր կարծիքով հետեւեալ պատճառներով։

Նախ բումանսիամը իւր ճոխութեան գաղաթնակէտին հասած, գեռ չափազանց զօրեղ թովչութեան մէջ էր պահում իւր դարը, և Բալզակն ինքը, չը նայելով իւր դրական հանճարին, դեռ չէր ազատւել այս կախարդանքից։

Վ. Հիւգօի հիւանդական շունչը վարակել է մեր դարը։ Գիտութեան կերակուրը բժշկում է այս հիւանդութեան արտայայտութիւնները, բայց երկար չի կարողանում արմատախիլ անել նրան։ Ֆրանսիական ամենամեծ նատուրալիստ գրողները վարակւած են նոյն չափազանցրած իդէալականութիւնով։

Բալզակի գործերի մի սոււար մասն ապացոյց է այն կուին, որ մզում էր վիպասանի դրական ուղեղը բումանտիկ սրտի հետ։ Եւ

ամեն անգամ, երբ ուղեղը թուլանում է, զբողի դիւրազգայնութիւնը տիրապես ոռում է ասպարէղին:

Այսպէս պէտք է բացատրել, մեր կարծիքով, այն զարմանալի հանգամանքը, որ Բալզակը, միջավացի ճշգրիտ նկարագրութիւն տալով հանդերձ, իդէալացնում է գործող անձերին: Նա ձեզ լուսանկարչական ճշտութիւնով մի որ և է շրջանի պատկեր է ներկայացնում, իրերի վերաբերմամբ համաշափութիւն (պրոպրոցիան) պահպանելով, յանկարծ այնտեղ մի հսկայ է կանգնեցնում:

Գուցէ այս հանգամանքին աջակցում էր և այն, որ նատուրալիսմի հօր հանճարը թոյլ չէր տալիս նրան բանական մարդու բոլորովին յարմարեցնել կենդանիներին, զանց առնելով նրա հոգեկան ոյժը, ինչպէս աշխատեցին անել մի քանի յետագայ գրողներ:

## II

Ֆլորերի ժամանակով, լիսուն—վախտունական թւականներին, դրական գիտութիւնները մեծ զարգացումն էին ստացել:

Անմահ Բիշայից յետոյ, մարդակազմութեան ուսումնասիրութիւնը մի նոր զարկ ստացաւ: Խակ Եարլ Բելի, Ֆլուրանսի, Մաժանդի հետազօտութիւնները մի նոր լոյս զցեցին մարդու Փիզիոլոգիայի վրայ և բացատրեցին մեր ուղեղի գլխաւոր ֆունկցիաները:

Գիտուառական Ֆլորերը մի յայտնի բժշկի որդի էր և ուրեմն միջոցունէր հետաքրքրելու բժշկական գիտութիւններով: Եւ, իրաքանչ գրքերից ակներեւ է, որ Գիտուառական հետևում էր այս գիտութիւնների զարգացման:

Բացի սոսկ գիտական աեղեկութիւններից, մեծ վիպասանը իւրէտիւդների մէջ մտցրեց այն ձևերը, որոնք գործ են ածւում բնագիտութեան մէջ, այն է՝ մանրահատումն (disséction):

Նա քրքրում է իւր նկարագրած կեանքը, լաւ զննում է իրերի գասաւորութիւնը և փոխադարձ յարաբերութիւնը, քննում է առարկաները մի առ մի ոչ թէ իւր սեփական, այլ հերոսների տեսակէտից, և լուսանկարչական ապարատը ձեռքին մտնում է առօրեայ կեանքի խորքերը և իւր պատկերները վերցնում: Սենտ-Բենվլը նրան անատոմիատ և Փիզիոլոգ է անւանում: Ենս այնպէս է բռնում գրիչը:

ինչպէս ուրիշները (անատոմիական) դանակը, առում է այս կրիտիկոսը։ Ֆլորերը չը բաւականացաւ շրջանի, կամ ինչպէս մենք անւանեցինք, միջավայրի ճիշտ նկարագրութիւնով, ինչպէս արդէն արել էր Բալզակը։ Մանօթանալով անատոմիայի և ֆիզիոգիայի հետ, ըմբռունելով մարդու զգայարանքների գործունէութիւնը, և - որ զիսաւորն է - նրա ուղեղի փուկցիաները, «Սալամբո»-ի դրողը կամեցաւ այս նորագոյն զիտական տեղեկութիւններն էլ մայնել վէպի մէջ։ Այսպիսով նրան յաջողւեց վասահութիւնով անել այն, ինչ որ նրա մեծ յաջորդն անգամ չէր կարողացել իրազործել. — նա փոքրացրեց գործող անձերին։

Մարդը, նորագոյն հետազօտութիւնների շնորհեւ, արդէն փոքր ի շատէ մանրահատած, քննւած, պարզւած էր, և այս մանրակրիտ ուսումնասիրութիւնը ցոյց տւեց, որ նա ոչ հրեշտակ է և ոչ հրեշ, ինչպէս բարողում էր բոմանտիկ կալոցը, այլ հասարակ մահկանացու։ Հիւգոյի, Դիւմաա - Զօր, Սուլիէի հերոսներն անբռնական, երեակայական անձնաւորութիւններ էին, Նէքսպիրի բոլոր գործող անձերը, նալզակի գործող անձերի մեծ մասը — բացառական էակներ։ Իսկ հասարակ մահկանացուն, իսկ առօրեայ մարդը, որին մենք ամեն բոսէ պատահում ենք, որի հետ ապրում ենք, այսինքն՝ մեր հայրը, մեր եղբայրը, մեր հարեանը, վերջապէս մենք ինքներս գեռ չէինք նկարագրւած։

Միենոյն ժամանակ գիտութիւնն ուսուցել էր նրան, որ մարդու մէջ կայ և ինքնուրոյն ութիւն, և ուրեմն նա հլու հապատակ չէ շրջապատող հանգամանքներից, ինչպէս աշխատեցին անել նրա հետեւողները։

Մի խօսքով, Ֆլորերին վիճակւած էր նկարագրել հասարակ մահկանացուներին իրանց ուղեղով ու զգայարանքներով։

Ես չափազանցնում եմ։

Կայ մի ուրիշ հանձար, որ անտարակոյս մեծ ներգործութիւն է ունեցել Ֆլորերի վրայ։ Դա Ստենլիան է։

Մենք մտադիր ենք աւելի մանրամասն քննել այս անզուգական վիպասանի գործը — որին Տէնը ամեծ բոմանիստ, դարիս ամենամեծ հոգեբանց արտօղուներն էր տալիս - երբ կ'ուսումնասիրէնք հոգեբանական դպրոցը։

Առ այժմ կ'ասենք, որ Ստենդալը դեռ երեսնական թւականներին, երբ Հիւգօն ստեղծում էր Հերնանիներ և Մարիոն Դըլորմներ, զարմանալի ճշառութիւնով հոգեբանական էտիւդներ էր տալիս մեզ: Եւ այս էտիւդներն այնքան ճիշտ են և այնքան նշանաւոր, որ արդի հոգեբանները Ստենդալին իրանց հայրն են անւանում:

## III

Գիւտուաւ Ֆլորերը ծնւեց Ռուանում 1821 թւին: Նա քսաներկու տարով Բալզակից կրտսեր էր: Նրա բժիշկ հայրը բաւականին կարողութեան տէր մարդ էր ու ոչինչ չէր խնայում իւր որդու զարգացման համար:

Ֆլորերը շափազանց աշխատասէր էր: Աշխատանքը մոռացնել տաեց նրան սէրը և նա ամուրի մեռաւ Ֆլորերն յիշեցնում է Ալեքսանդր Դիւմայի քիմիկոսին, որ ասում է.

— Ես ժամանակ չունեցայ սիրելու:  
Եւ ճշարիս որ Քիկին Բովարի իւ-ի հեղինակը դիանականի պէս է ուսումնասիրում իւր նկարագրած միջավայրը:

Նախ քան մի գիրք գրելը, Ֆլորերը զցում է իրան տաժանական աշխատանքի մէջ: Տարիներով նա կը խրւի գրադարանների մէջ, կը քրքրի գրքերի կոյտեր, հատորներով դիտողութիւններ կը զրի: Օրինակ, «Երկրագործութեան մասին մի տասը էջ գրելու համար, նա քսան-երեսուն հատոր մանսագիտական գրքեր կը կարդայ, ասում է Զոլան, — բացի այդ նա հարց ու փորձ կանի հասկացողներին, կը հետազօտի զաշտերը: Եթէ հարկ լինի՝ կ'անայ նկարագրելի տեղը և այնտեղ կ'ապրի... Միշտ նոյն առանձին խնամքը դէպի իրականը: Նա քննում է լուսանկարները, պատկերները, ժամանակակից լրագիրներն ու գրքերը... իւրաքանչիւր վէպ նրան ստիպում է մի ամբողջ աշխարհ տակնուվայ անելի իւր «Զգայնական դաստիարակութիւն» բոմանը գրելիս, նա ուսումնասիրել է մեր երկրի քսան տարւայ քաղաքական և բարոյական պատմութիւնը և տւել է մեզ մի ամբողջ սերնդի թողած ահագին աղքիւրները: Վերջապէս, «Սալամբօ» և «Սուրբ Անտոնիոսի փորձութիւն» բոմանների համար աշխատանքնաւելի ևս ըեղմնաւոր էր: Նա ճանապարհորդել էր Աֆրիկա և Արե-

մուտք, դաստապարտել էր իրան մանրամասն ուսումնասիրել հնութիւնը, թափ տալ բազմաթիւ գաւերի փոշին։

Ֆլորերի իւրաքանչիւր զիրքը մի ամբողջ պատմական շրջանի նկարագիր է, նա ոչ մի տող չէր գրում առանց երկար խորհելու, երբեմն տասը հատորաշափ «դիտողութիւնները» միայն մի բամանի նիւթ էին դառնում։ «Խակ այս զիտողութիւններից մի տող գրելու համար, նա մի ամբողջ էջ էր կտրդում», առում է Զոլան։ Նա իւր գրքերը գրելու համար լսուիներէն է սովորում, զանազան զիտութիւններ, ինչպէս՝ հնագիտութիւն, Արևելքի հին պատմութիւն է ուսաննում։ Այսպիսով նա վստահ էր, որ իւր սփասուալին մասը անխախտելի է։

Երբ նա հրատարակեց իւր պատմուկան «Սալամբօ» րոմանը, որի մէջ նկարագրում էր հին Կարթագէնը, մի գերմանացի պատմաբան և հնագէտ փորձեց սխալ ցոյց տալ մի քանի մանրամասների մէջ։ Այն ժամանակ Ֆլորերը մի ահազին ցուցակ տպագրեց, որից երեւաց, որ այս արտանեեան աշխատողը տակն ու վրաց է արել հոռացական և յունական ամբողջ գրականութիւնը, նորագոյն հնագիտական հետազոտութիւնները և կլանել է այն ամենը, ինչ որ յարաբերութիւն ունէր Կարթագէնի պատմութեան հետ։

Եւ մեծ ռոմանիստը աւելացնում է, թէ նա չի արգելում քննադատել գրքի գրականական մասը, բայց ոչ ոքի թոյլ չի տայ ձեռտալ նրա պատմական և սոսկ զիտնական բաժիննին։

Ահա ինչ կատարելագործութեան էր հասցրել Ֆլորերը րոմանի նկարագրական մասը։

«ոյնչափ մշակեց նա իւր ոճը։ Ճիշտ պատկերը ճիշտ զծերով պիտի նկարւէր։ Այս է պատճառը, որ Գ. Ֆլորերը չէր դադարում իւր ոճը կոկելուց, նրբացնելուց, նախադասութիւնները հաւաք, կարուկ դարձնելուց։

Նա նոյնչափ խստապահանջ էր դէպի իւր ստիլը, որչափ դէպի պատկերների ճշտութիւնը։ Նրա աչքին ստիլն ահազին նշանակութիւն ունէր զրւածքի տեսողութեան վրաց։ Բառերը պիտի ճշտապէս արտայայտեն մեր միտքը, որպէս զի այդ միտքը յարատեռութիւն ունենայ։ Բայցի ճշտութիւնից նա, ժամանակակիցների ասելով, այնպէս էր կազմում իւր վրագները, որ կարդալիս երաժշտական մելոդիա

դուրս գար: Նստադասութիւնն աւարտելիս նա ինքը բարձր ճայնով մի քանի անգամ կարդում էր և եթէ մի որ և է բառ կամ մի հնչին խանգարում էր այս մելոդիան, փոխում էր խոկոյն:

## IV

Այս զբելիս սեղանիս վրայ դարսած ունիմ մի փոքրիկ կոյտ զբքերի, հինգ հատորներից բաղկացած: այս Դ. Ֆլորերի հինգ բումաններն՝ են «Տիկին Բովարի», «Սալամրօ», «Գդայնական դաստիարակութիւն», «Սուրբ Անտօնիոսի փորձութիւնը», «Բովար և Պեկիւշէ»:

Ես թերթում եմ այս վաղուց ծանօթ հատորները և չեմ կարողանում զսպել հիացումն:

Ֆլորերը դարիս ամենամեծ վարպետներից մէկն է:

Այստեղ այլ ևս Բալզակային ահաեցուցիչ աշտարակները և եգիպտական պիրամիդները չը կան,—այստեղ մի նրբաշէն, մարմարիօնէ պալատ է, որի պանչելի քանդակներն ու զարդարանքները ապշեցնում են մարդուս:

«Տիկին Բովարին» լոյս տեսաւ 1856 թւին:

Այս թւականը մի պարագլուխ է իրական բումանի զարդացման մէջ: «Տիկին Բովարին» այն զբքերից է, որնք դուրս են քաշում հեղինակին անյայտութիւնից և ուղղակի անմահութեան պատւանդանի վրայ դնում:

Անտարակոյս այսօր այս վէպը նատուրալիստի գոհարներից մէկն է, իսկ 1856-ին նա միակ գոհարն էր:

Այստեղ իդէալացումն, ֆանտազիա չը կայ: Այստեղ նկարագրում է իսկական կեանքը իւր գեղեցիկ և ագեղ կողմերով:

«Տիկին Բովարին» ֆրանսիական նատուրալիսմի դլուս-գործն է, ասում է դը Բիւնըտիերը, այս բումանը պիտի մնայ իրքեւ դրական դպրոցի առաջին ամենաբարձր յայտնութիւն:

Այս առաջին աշխատութիւնով Ֆլորերը մի զօրեղ գրական յեղափոխիչ է հանգիսանում: Միջավայրի կարճ և ազդու նկարագրութիւնը, դործող անձերի իրականութիւնը, իրանց հողերանական ճշտութիւնով—ամբողջ գրւածքը դուրս եկաւ հեղինակի գրչի տակից իրքեւ ժամանակակից գրական դպրոցի յաղթանակ:

«Տիկին Բովարին» կնոջ անհաւասարժութեան (աղիւլտեր-adultere) պատմութիւնն է:

Անցքը պատմում է եւրոպական այն փոքրիկ գիւղերից մէկում, որոնք Ֆրանսիայում յայտնի են petits pays անունով: Այսուղ ապրում է բժիշկ Բովարին, որ առաջին կինը կորցնելով, ամուսնանում է կմմայի հետ: Այս կմման է տիկին Բովարին, բոմանի հերսուհին: Տիկին Բովարին վեպի առանցքն է, որի շուրջը պատումնեն մնացած անձնաւորութիւնները: Ֆլրերը մի նոր ձեւ է գործ դնում: Նա վերցնում է կմմային մանկութիւնից, ցոյց է տալիս մեզ նրա հոգեկան զգացմունքների զարդացումն, որոնք բնականաբար պիտի տանեին նրան դէպի աղիւլտեր (անհաւատարմութիւն):

Տասներեք տարեկան հասակում կմման տարում է մենաստան (այն ժամանակւայ կանացի սեռը մենաստանումն էր միայն կրթում): Սկզբում այս փակւած կեանքը դուր եկաւ փոքրիկ կմմային և նրա զգացուն դիւրաթեք ոգին այս խորհրդաւոր միջավայրում ընկնում է մի առանձին սքանչացման (էքսառազի) մէջ: «Պատարագին ուշադիր լինելու փոխարէն» նա դիտում էր իւր աղօթագրքի զարդապատկերները, և նա սիրում էր հիւանդ Քրիստոսի գառը, որի սիրու սուր նետերով ծակոտած էր, սիրում էր խեղճ Փրկչին, որ ընկճում էր, խաչի ծանրութեան տակ... Խոստովանանքի զնալիս զանազան մանր մեղքեր էր հնարում, որպէս զի աւելի երկար ժամանակ մնայ չռքած, ձեռքերը միացրած, երեսը վանդակապատին, քահանայի շունչի տակ: Երբ քարոզների մէջ լսում էր Քրիստոսի համեմատութիւնը երկնային փեսացուի, երկնային ամուսնու, երկնային սիրահարի հետ, կամ երբ յաւիտենական պասկի անունն ընկնում էր նրա ականջը, սիրու լցում էր անսասելի քաղցրութիւնով:

Ահա մի գրէի շարժումով մի զգացուն հոգի նկարագրւած: Խնչպէս մարդ զգում է, որ գործ ունի մի նեարդային փոքրիկ արարածի հետ: Տիկին Բովարին իւր ժամանակւայ հարազատ զաւակն է, նա կրում է իւր վրայ դարիս նեարդայնութեան (ուրիշութեան) կնիքը: — Կմմայի բնաւորութեան այս առանձնայատկութիւնը պիտի դեկավարի նրա բոլոր գործերը:

Եւ ի՞նչպէս բնական են այս աղջկայ ոգու բնորոշ գծերը:

«...Նա արկածներ էր որոնում: Նա սիրում էր ծովը փոխու-

րիկների համար, իսկ այն կանաչն էր միայն դուր զալիս նրան, որ բուսնում էր աւերակների մէջ: Ամեն ինչից անհրաժեշտաբար նա պիտի իւր համար մի օգուտ դուրս բերէր, և դէն էր զցում իրքւ անօգուտ բան, ինչ որ կերակուր չէր տալիս նրա սրտին, որովհետեւ նա ոչ թէ գնահատում, այլ զգում էր, և մի պէջաժ ղիտելիս, նա միմիան յուղմունքներ էր որոնում:

Այս գիւրազգացութիւնն աւելի ևս զարդանում է անկանոն և անխափիր ընթերցանութիւնից: Մօր մահը մի մեծ հարւած էր Էմմայի փափուկ սրտին. նա դրում է հօրը, որ իրան էլ մօր զերեղմանում թաղեն և երջանիկ է, որ նրան խզնում են և հիւանդ են կարծում:

Այս են Էմմայի մասին ունեցած տեղեկութիւնները:

Նա թողնում է մենաստանը: Ենրբ բժիշկ Շարլ Բովարին, նրա ապագայ ամուսինն առաջին անգամ եկաւ Բերտո (գիւղը), Էմման իրան արդէն հիասթափւած էր համարում, կարծես ամեն բան տեսել էր արդէն և այլ ևս ոչ մի զգացմունք անյայտ չէր մնացել նրանից: Սակայն, ինչպէս միշտ, մատաղահաս օրիորդը կամենում է Շարլի մէջ տեսնել իւր երազածը: Ամուսնութիւնը, ինչպէս և պէտք էր սպասել, շի լցնում այն զատարկութիւնը, որ տիկին Բովարին դեռ օրիորդ ժամանակին զգում էր իւր մէջ, և էմման աշխատում էր հասկանալ երջանկութիւն, կիրք և սիրաբեցութիւն բառերը, որոնք այնքան քաղցր էին հնչել կարդացած դրքերի մէջ:

Ընթերցողը լաւ զգում է, որ այս կինը երբէք բախտաւոր չի լինելու: Էմմայի ներքին աշխարհն այնքան հարուստ էր կրքերով, բուռն իղձերով, որ նրա ամուսինը չէր կարող համապատասխանել նրա հոգեկան պահանջներին:

Այսպիսի կնոջը մի հաստատակամ և զօրնեղ մարդ պիտի պատահէր, որի բարոյական և վիզիթական ոյժի դէմ խոնարհէր նա, զգալով իւր վրայ ամուսնու առաւելութիւնները:

Չէ՞ որ տղամարդն ամեն ինչ պիտի գիտենայ, չէ՞ որ նա հոգեկան մեծ յուղմունքների հետ պիտի ծանօթացնի իւր կնոջ, բանաց նրա առջեւ գոյութեան բոլոր գաղտնիքները: Այսպէս է մոտածում տիկին Բովարին, այս է նրա իդէալական տղամարդը:

Եւ ի՞նչ ստացաւ այս երազածի փոխարէն։ Մի գիշղական բժիշկ, որ վաղուց եռ է մնացել զիտութիւնից, որ ոչինչով չի հետաքրքրում և, Ռուան եղած ժամանակը, մի անգամ դռնէ չի մտնում թատրոն, որ կօրցնելով պահանջ դէպի ինքնազգայումն, գնալով վարակւել էր շրջապատող դռեհիկ զաղափարներով, կոպիտ դիւզացի էր դառել իւր անհամ, անհետաքրքիր խօսակցութիւնով, որոնց մէջ փթած, հանրածանօթ մոքեր էր յայտնում։ Եւ խեղճ հիասթափւած էմման ի զուր էր որոնում նրա մէջ մի ձիրք, մի աչքի ընկնող ընդունակութիւն, մի կոոր ինքնուրոյնութիւն, որին կարողանար կաչել իւր իդէալը փրկելու համար։ Բայց Շարլը ոչ լողալ դիսէ, ոչ զինախաղ, ոչ հրացան բանացնել դիտէ և ոչ ձի հեծնել...

Տիկին Բովարիի սիրոն այսպիսով ամեն ինչ դործ դրեց իւր ամուսնուն սիրելու համար։ Բայց էմման զգում է, և ընթերցողն էլ զգում է նրա հետ, որ քանի գնայ, քանի որ մանրամասն ուսումնասիրի նա իւր ամուսնուն, առելի կը հեռանայ այս անգոյն, դատարկ, անբովանդակ և տաղտկալի էակից։

Եւ յուսահատութեան մէջ խեղճ կինն այս ճիշն է արձակում, ճիչ, որ խուլ բողոք է իրան կամաց կահաց տիրապետող ազուլտերի պահանջի դէմ։

—Տէր Ասուած, ինչի՞ ամուսնացայ ես Շարլի հետ։

Նա համեմատում է իւր նոր ծանօթ արիստոկրատների հետ, մի վիկոնտի, մարկիչ գ'Անդերլիլիէի հետ, որոնց մէջ դանում է մի ինչ որ գրաւիչ յափշտակող բան, որ բացակայ է իւր ամուսնու մէջ։ Մարկիզը հարուստ մեծատուն, մի վերին աստիճան կրթւած, նուրբ արիստոկրատ շարժումներով և ձեւերով, կախարդիչ պերճախօսութիւնով, սրախօս լեզով, մանր ոտերով, Պարիզի ձուլարանի միջով անցած կաւալեր էր։ Էմման պիտի սիրէր նրան, որովհետեւ նա հակապատկեր էր իւր առելի ամուսնուն։

Սակայն էմման, այս շխտակ բնաւորութիւնը, չէր կարող հաշտվել իւր երկդիմի զրութեան հետ։ Գուցէ Շարլն այնքան էլ անտանելի չէ, զուցէ զեռ հնար կայ սիրելու նրան և այդպիսով իւր պատիւը փրկելու։

Մի միջնադէպք յոյս է տալիս նրան։ Դեղարար Համեի խորհըրդով և յորդորանքով բժիշկ Բովարին որոշում է մի տղալի ծուռ ոտը

դրասուլը Այս օպերացիան պիտի ընդարձակեր բժշկի հեղինակութիւնը Նարլը պիտի դանակ բանեցնի, գուցէ առաջին անգամ իւր կեանքում, Նարլը վերջապէս մի մեծ գործ պիտի կատարի Ահ, որքան երջանիկ է Էմման, ինչ յուզմունքով ընկնում է նա իւր մարդու վզովը, երբսա, օպերացիան վերջացրած, նրա անեւակն է մանումն Վերջապէս, իւր ամսումն էլ ուժեղ մարդ է, վերջապէս կարող է սիրել նրան... Յաւակցաբար, մի ուրիշ, աւելի սարսափելի, հիասթափումն սպասում էր տիկին Բովարիին:

Մի քանի օրից յետոյ տղայի ոտն ուռչում է և կերցաւն սկսում է: Քաղաքից հրաւիրւած բժիշկը դատապարտում է օպերացիան, որը մի մեծ աններելի սխալ է համարում և առաջն աւելի նսեմացած, աւելի փոքրացած է իւր կնոջ աչքին, որ յուսահատւած անդառնալի կերպով տրւում է աղիւլտերին, մէկ սիրեկանից միւսին անցնելով:

## V

Ես երկար կանգ առայ Էմմայի վրայ, որովհետեւ այս Ֆլորերի ամենահաստատ և ամենապահչելի տիպերից մէկն է:

Խնչպէս տեսնում ենք, հեղինակը ներում է Էմմային իւր մեծ յանցանքը, նա բաց է անում մեր առաջ այս կնոջ հոգու ծալքերը և հաստատում է, որ նրա անհաւատարմութիւնը դէպի իւր ամուսինը մի անփախչելի չարիք էր, եթէ նկատի ունենանք Էմմայի նեարդայնութիւնը և հանգահանքների անհամապատասխան դարսումն:

Էմմայի հոգեբանութիւնը մեզ հասկանալի է և ուրեմն հեշտ Արդ, այդ տեսակ կինն անկարող է հոգեկան անդորրութիւն գտնել ամուսնական կապերը ժխտելով և օտարի սիրելով: Այսպիսի Համբողջ բնութիւնները ամբողջովին են տրւում իրանց սիրուն: Էմման տանջւում է ստիպւած լինելով բաժանել իւր սէրն ատելի ամուսնու և պաշտած սիրեկանի մէջ և, գլուխը բոմանտիկ մոքերով լի, աղաշում է մարկիզին, որ փախցնի իրան մի անծանօթերկիր, որտեղ նրանք կարող կը լինէին անարգել սիրել միմեանց:

Սակայն մարկիզը հեռանում է նրանից Էմման սկսում է յաճախել Լէսնին, որ բնակւում է քաղաքում: Այս նոր աղիւլտերն էլ բաւականութիւն չի տալիս այս կնոջ իդէալին, նա

օրից օր աւելի և աւելի է զգում իւր սրտի դատարկութիւնը։ Մի ուրիշ ցաւ տանջում է նրան։ Սիրեկանները նրան մեծ գումար են նստել։ Նա ընկել է վաշխառուների ճանկը, որովհետեւ վատահութիւն չունի ամուսնուց իւր պարտքերի վճարումն խնդրել։ Մի օր դատաստանական աստիճանաւորները գալիս են ևվեր են զրում տան բոլոր իրեղէնները պատքերի փոխարէն։ Կմնան պարտասիրոջ մօտ է գնում, նրա ոսերն ընկնում, որ սպասել տայց, բայց բանկիրն ամօթալի առաջարկութիւն է անում։ Նա վճռում է իւր սիրեկաններին դիմել—երկուսն էլ մերժում են օգնել նրան։ Այն ժամանակ, անպատճած, նսեմացած, իւր ամենասուրբ զգացմունքները—որ նա չէր զացել այս անխիղմ մարդկանց—ոտնակոխ տեսած, տիկին Բովարին, յուսահատութեան գաղաթնակէտին հասած, անձնասպանութիւն է զործում...»

Նարլ Բովարին այն բազմաթիւ բժիշկներից է, որոնք զիտութիւնն արհեստի են վերածում։ Նա իդէալ չունի, նրա ընդունակութիւնները սաստիկ սահմանափակ են, ինչպէս սահմանափակ է այն շրջանը, որի մէջ զործում է։ Նարլ մտաւ որ զարգացումով, հոգեկան ձգուումներով անհամեմատ ցած է իւր կնոջից։ Նա յուզմունքներ չի սիրում և չի որոնում, նրա կեանքը բուսական է։ Սակայն այս, առերես անսարքեր, մարդու սրառում մի անսահման փափկութիւն է տիրում, —բուռն սէր դէպի իւր կինը և անշափ ներողամտութիւն դէպի նրա սիրեկանը...»

Մի չափազանց յաջող տիպ է գիւղական դեղագործ Համեն, որ ամեն բոպէ աշխատում է իւր կարեւորութիւնն ակներև անել։ Նա ազատամիտ է, եզրիտներին հալածող, մի կիսադրագէտ գրչակ, որ կեղծ թղթակցութիւններ է դրում Ռուսնի լրագրում ու արհամարհաբար վիճում է գիւղական քահանացի հետ։ Նա այնպէս է աչք զցում շարւած գեղաշիշերի վրայց, որ կարծես մարդկութեան փրկութիւն այս գեղերի լատիներէն անունների մէջն է...»

Այս տիպերն ստեղծելով Ֆլորերն ապացուցեց, որ հարկ չկայ հրէններ և հսկաներ ստեղծել վէպը հետաքրքիր դարձնելու համար։ Նրա դրական ուղեղը պահանջում էր առօրեայ կեանքի նկարագրութիւն, առօրեայ մարդկան հոգեբանութիւն...»

Մենք յիշելնք արդէն, թէ ինչ խնամքով ուսումնասիրում է

Ֆլորերը շրջանը, միջավայրը, որտեղ անցնում է գործողութիւնը: Այս նկարագրական մասը ածիկին բովարիից, ինչպէս նրա բոլոր բոյմանների մէջ, վարպետական կատարելագործութեան է հասցրած:

## VI

Եթե նմուշ Ֆլորերի պատմական վիստասանութեան լիշենք նրա հոչակաւոր «Սալամբօ»-ն, որ լոյս տեսաւ 1863-ին:

Հեղինակը կամեցաւ գիտնական մեթոդ մոցնել պատմական բոյմանի մէջ:

Կարթագէնի վարձկան զօրքը Համիլկարի ազդիում տօնում է Երիքսի պատերազմում իւր տարած յաղթութիւնը: Այս մի խառնուրդ է ազգութիւնների, հագուստների և զէնքերի: Մենք ընկնում ենք մի առասպելական աշխարհ, խրում պատմութեան խորքերը: Ենչասպառ դիտում է ընթերցողը այս դիւթական տեսարանը և անզգայաբար, մոքով յափշտակւած, թերթում է էջերը, սաւառնելով դէպի այն անծանօթ աշխարհը, որին՝ Ֆլորերի զօրեղ ձեռը յանկարծքողաթափ է անում:

Եւ այնքան կենդանի է այս 5—6 էջում նկարագրած խընծոյքը, որ մենք պարզ տեսնում ենք տասնաւոր տարրեր տարրերից բազկացած վարձկան զօրքը, տեսնում ենք բիւրաւոր զինուրների փալուն հագուստները, մերկ գունաւոր հսկայական կուրծքերը և անդամները: Լսում ենք ծանր զէնքերի շառաչիւնը և խռպոտ ձայները, հոտոսում ենք Համիլկարի ազգիների բուրմունքը:

Գիշեր է: Կիսախաւարի միջից տեսնուում է Համիլկարի մարմարինէ պալատը իւր սանդուխտներով և բարձր պատշգամբներով:

Գինու գոլորշները թափանցում են օդը: Սալամբօն, Համիլկարի աղջիկը, իջնում է յանկարծ սանդուխտներից յաւերժահարսի նման: Սալամբօի հրաշալի տեսքին սիրահարւում է լիրիացի զինուր Մաաթօն, և դառնում է ախոյեան քաջ նարր-Հավասին, նումիրացոց զօրապետին, որին խոստացած էր Սալամբօի ձեռքը:

Համիլկարը բացակայ է: Վարձկանները, յոց Սպենդիումի դըրդումով, դարձնում են իրանց զէնքը Կարթագէնի դէմ: Մաաթօն Սպենդիուսի հետ սրբապղծում է տաճարը, անպատւում է Տանիտին,

յափշտակելով՝ Զաիմֆըլ (Տանիտ աստւածուհու ծածկոցը) և փաթափելով՝ նրա մէջ մանում է Սալամրօի ննջարանը։ Բայց Սալամրօն նզովում է սրբազդին ու Մաաթօն Զաիմֆի պաշտպանութեան ներքոյ դուրս է գալիս քաղաքից, ամբոխին շշկած թողնելով։ Վարձկանները պաշարում են քաղաքը և սարսափի մէջ են գցել նրան արդէն, երբ Համիլկարը վրայ է հասնում ու քաջալերում է ժողովրդին։ Սակայն Կարթագէնը տագնապի մէջ է, զօրքերն ընկճում են, ուտելիքը պակսում է, և պատերը թնդում են ահազին մեքենաների հարւածների տակ։

Կարթագէնը պիտի ընկնի, որովհետեւ Տանիտի Զաիմֆըլ գողացած է։ Գլխաւոր քրմապետ Սահարարիմը քաղաքի միակ փրկութիւնը Սալամրօից է կախւած տեսնում։ Սալամրօն պիտի զնա Մաաթօի բանակը և իւր կուսութեան գնով փրկէ Զաիմֆըլ։ Մաաթօն սիրով արբեցած քնում է, և Սալամրօն փախցնում է սուրբ ծածկոցը։ Բայց այս էլ չը կարողացաւ փրկել Կարթագէնը, որ այժմ պապակել էր ծարաւից, որովհետեւ թշնամին ջուրը կտրել էր։ Ուրեմն աստւածները բարկացած են քաղաքի վրայ և պէտք է իշեցնել նրանց բարկութիւնը։

Այսուեղ նկարագրում է մանուկների զոհաբերութեան սոսկալի ծէսը։ Զարհուրելի Մոլոխի փորը, կրակից կարմրած, ժամերով կլանում է անմեղ կենդանի երեխաներին, մինչդեռ փողերի ձայնը և քրմերի երգերը խեղդում են ծնողների յուսահատճիւրը և այրւող մարդկացին մնի թժժոցը...

Վերջապէս աստւածները մեղմանում են։ Կարթագէնը փրկւած է և գաղան Մաաթօն գերի է տարւած։

Գերիների պատժի ժամը խփեց։ Ամրող քաղաքը ոտի վրայ է։ Համիլկարը, Սալամրօն, քուրմերը և մեծամեծները շարւած են պատւաւոր տեղերում։ Մաաթօին դուրս են թողնում, ձեռները քամակին շղթայած, սարսափելի հարւածների ու խայթոցների տակ։ Խելագարի նման վազում է նա երկու պատերի պէս շարւած ամբոխի միջով, և մինչդեռ նա աւաջ է վազում, երկու կողմից անգութ ամբոխը պարզում է իւր ժանիքները, չանկուում է նրա մերկ մարմինը, կաշու կտորներ է պոկում, և ամբողջ անձն վերք դարցնում նուկ երբ, ուժերն սպառւած, արինկամ եղած, դէմքն այլանդակւած,

նա յանկարծ վիրաւորւած գազանի նման գետին է փռւում, մորակիր հարւածները տեղում են նրա երևսին, կուրծքին և ամեն բարձրանալով մի կտոր միս պոկում մարմնից: Այն ժամանակ այս այլանդակ մարմինը սարսափելի տանջանքից և կոչծից կարծես կեանք ասացած վեր է ցատկում կրկին և առաջ մղումն նայց մի քիչ յետոյ կրկին կանդ է առնում, այլ ևս անկարող է առաջ գնալ, որքան էլ մորակների հարւածները քրքրէին նրա մարմինը: Այժմ նա կարմիր մսի մի կոյա է դառել մարմնի կոորները պատասխած շրերի նման կախ են ընկած, արինը շուռմ է վերքերից: Մաաթօին այլ ևս ճանաչելն անգամ անկարելի է, մարդկացին ձեւն, անգամ կորցրած է նաև նա այժմ անվրդով կանգնած է մորակների հարւածների տակ, կարծես կորցրել է զբացողութիւնը. — ոչ մի հնչիւն չի դուրս գալիս նրա բերնից, ոչ մի կարկամումն չի ձգձը գում նրա անդամները... նա նայում է դէպի տախտակամած:

Յանկարծ այս ողորմելին, ետեւից արեան յետքեր թողելով, առաջ է վազում մինչև տախտակամածը և Սալամբօի ոսերի տակ վայր է ընկնում անշնչացած:

Պէտք է կարդալ այս դիւթալի դրւածքը: Ընթերցումից յետոյ մարդ երկար ուշքի չի գալիս: Մի ամբողջ պատմական աշխարհ բացւել է նրա առջեւ, — հնութիւնը իւր յափշտակող սքանչելիութիւնով: Ամեն ին: մեծ է այստեղ: Այս դիրքը հրաշալիների մի ժողովածու է, իւրաքանչիւր էջ մեզ մի նուրբ քանդակած պատկեր է տայիս հեռաւոր պատմական կեանքից և մենք, այս զարմանալի դիրքը ծածկելուց յետոյ, բուռը տպաւորութիւններից խելքամազ ենք լինում...

Անկարելի է բոլոր հրաշալի պատկերները յիշել: Սակայն այն էջերը, որնց մէջ նկարագրուում է վարձկանների ինջոյքի տեսարանը, մանուկների զոհաբերութեանը Մողոխին, կամ այն, որտեղ պատմում է, թէ ինչպէս մոհացաւ վարձկանների դօրքը մի կիրճում կարթագէնացիներից պաշարւած, վերջապէս առաջ բերած Մաաթօի պատիժը — այս բոլորը մի հանճարեղ վարպետի գործ է...

Իսկ Սալամբօի երևալը վարձկանների ինջոյքի մէջ, իսկ փղերի պատերազմը, իսկ Սալամբօի տեսութիւնը Մաաթօի հետ այս վերջինի վրանում, նրանց սիրահարութիւնը և Զարիմքի յափշտակումն, կամ Մաաթօի և Սպենդիուսի քաղաք մանելը մութ ջրուղիի մէջ լողալով:

## VII

Բայց տեսէք հերոսների հոգեբանութիւնը:

Մի մեծ պատմական երևոյթ մեծ յուզմունքներ մեծ կրքեր և է յարուցանում: Մի համայնական ողի, ժամանակի ողին, աիրապետում է գործող անձերի բնաւորութիւնը:

Ահա այս ահռելի Մաաթօն, որ հանդգնում է մոնել Տանիտի տաճարը և յափշտակել Զահիմֆը, չերկնչելով երկնքի բարկութիւնից, որ քիչ էր մնացել տապալէր կարթագէնիի հանրապետութիւնը, ու մեծ քաղաքը մոխիր դարձնէր, ահա այս կիսաատւածը սանձւում, կաշիանդւում է Սալամբօի սիրով: Այս սէրն է, որով կուրացած, նա կորցնում է ինքն իրան. Զահիմֆը յափշտակել է նրա բոլոր հոգեկան ոյժերը: Այս սէրն է, որ մարմինը քրքրւած, արինքամեղած, կիսամեռ Մաաթօնն ոյժ է տալիս վազել դէսի իւր սիրած էակը, որպէս զի նրա ոտի տակ հոգին աւանդի:

Ահա Սալամբօն, որ Զահիմֆը ետ գարձնելու համար չի վարանում զոհել իւր կուսութիւնը Մաաթօին, նրա բանակը զնալով:

Ահա Սահաբարիմը, գլխաւոր քրմապետը, որ երևան է գալիս, իբրև ժամանակակից գիտութեան ներկայացուցիչ և որ կարծես կասկածում է իւր զիտեցածի մասին: Նա է խորհուրդ տալիս Սալամբօին այս հերոսական քայլն անել:

Ահա Ապինդիուսը, հնարագէտ, և սատանա լոյնը, որ այնքան նման է Ադիսեսին:

Ֆլոբերի, ինչպէս և Բալզակի, մէջ րոմանտիկը և գիտնականը կողք-կողքի են ապրում, մէկը միւսին չի սպանում: Միայն Ֆլոբերն աւելի գիտնական է քան թէ Բալզակը. նրա մէջ րոմանտիկ ողին աւելի ճնշւած է, քան թէ այս վերջին րոմանիստի մէջ:

Մենք զիտենք, որ տիկին Բովարի-ի հեղինակը նկարագրական մասը բարձրացրեց մինչև զիանական հետազոտութեան աստիճանը, բայց, հերոսների հոգեբանութիւններն ուսումնասիրելիս, մենք (գոնէ մի քանի գրքերում) հեշտութիւնով նկատում ենք, որ հեղինակը չի խուսափել րոմանտիսմի վարակիչ ազդեցութիւնից:

## VIII

Ֆլորեն անտարակոյս դարիս գրական «ոչնչականներից» (Նիհիլիստ) և հոռետեսներից մէկն է։ Նրա հերոսները խարւած են իրանց յոյսերից և իրանց իդէալին չեն հասնում երբէք։ Այսպիսի անձերին, կարծեմ Ազֆ. Դոդէն առաջինը կնքեց բատէս անունով, որ մօտաւրապէս կարելի է վրիպած բառով թարգմանել։

Այս անյաջողութիւնը կեսնքի մէջ, այս իդէալների մշտական փլատակումն նկատում է Ֆլորենի բոլոր գործերում։ Այս մեր դարի հիւանդութիւնն է, որ, Բուրժէի ասելով, իդէալի և իրականութեան մէջ եղած անհամաձայնութիւնից է առաջանում։

Տիկին Բովարին, չը գոնելով իւր երազած սէրը, թունաւորւում է հիասթման մէջ։ Մաաթօն («Սալամբօշ-ի մէջ») անոելի կոիներ է վարում Կարթագէնի կոյսի սէրը վայելելու համար, բայց բազզը, մի բոսէ իւր սիրուհուն մօտեցնելուց յետոյ, ընդմիշտ հեռացնում է նրանից։

«Զգայնական դաստիարակութեան» մէջ գործող անձերը բոլորը վրիպածներ են՝ Ֆլորենիկ Մորօն, տիկին Արնանը իրանց սիրոյ մէջ, Դելորիէն, Լուիզան, Պելլընը, տիկին Դամբրեօզը և ուրիշները։

„Je demande quelque chose qui m'éalte, qui m'enlève aux misères de ce monde“, ասում է Ֆլորենը իւր հերոսներից մէկի բերանով։ (Ես մի բան եմ ուզում, որով կարողանայի յափշտակել, որ կարողանար հեռացնել ինձ այս ողորմելի աշխարից)։ Ֆլորենի հերոսների հոգեկան աշխարհը երբէք չի լցւում։ Ոչ սէրը (Էմմա), ոչ գիտութիւնը և աշխատասիրութիւնը (Բովար, Պէկիւշէ, Սահամբարիմ), ոչ փառքը և մեծութիւնը (Մաաթօ) բաւականութիւն չեն տալիս հիասթափածներին և յուսահատւածներին։

Ուստաց գրականութեան մէջ այս ուզութիւնը տիրապետում է Տուրգենեւի, Տոլստոյի բոմաններում։ Այս տեսակէտից, Բուրժէի կարծիքով, Տուրգենեւի Հօնի և Ջեմъ վէպերը կարելի է դնել «Զգայնական դաստիարակութեան» Տիկին Բովարիշ-ի կողքին <sup>1)</sup>։

<sup>1)</sup> Յականի է, որ Տուրգենեւը Փրանսիական շկոլավին է պատկանում և սերտ կապած էր Ֆլորենի, Դոդէի, Զոլավի և միւս Փրանսիական նատուրալիստների հետ։

## IX

Ֆլորերի դերը նատուրալիսմի զարգացման մէջ ահազին է:

Նրա «Ճիկին» Բովարինա ժամանակակից բոմանի կատարելատիպն է, և կը մնայ իրբե այս վիպասանի ամենապանչելի գործը:

Այս վիպով Ֆլորեր հիմնեց օքյեկտիւ բոմանը:

Հեղինակի անձնաւորութիւնը չը պէտք է թափանցի նրա գըր-  
ւածքի մէջ, ինչպէս այդ նկատում էր Բալզակի վէպերում: Այս  
վերջինը չէր թագցնում իւր համակրութիւնը կամ հակակրութիւնը  
գէպի իւր հերոսները: Նա գնահատում է, գովասանում, կամ դատա-  
պարտում:

Ֆլորերի գրւածքներում բոմանիատի անձնաւորութիւնը բոլո-  
րովին կորչում է: Նա միայն փաստեր է տալիս, միմիայն նիւթեր  
է ժողովում: — սրանց գնահատումն ընթերցողին թողնելով:

Նա որոշում է մի շրջան, որի մէջ քցում է մի շարք անձ-  
նաւորութիւններ, յայտնի հոգեբանական հիւստածքով, առաջա-  
դրում է նրանց մի ինտորիգա և, ինչպէս ասում են, «ինքը զրադ է  
քաշւում», թողնելով իւր հերոսներին գործել միջավայրի և իրանց  
հոգեբանութեան համեմատ:

Այս — Ֆլորերի «գեղարւեստի անդիմութիւնն է», (impersonna-  
lité de l'art), — սկզբունք, որ գրական բոմանի հիմունքներից մէկն  
է այսօր:

«Սալամրօշի հեղինակը, թողնելով Բալզակի ապահովերները»,  
մեզ մի մեծ շրջանի հաւաք նկարագիրն է տալիս, այնպէս որ ապա-  
կերները կապւում են միմեանց հետ և ձուլում են լնդհանուր  
պատմածքի մէջ:

Մի երրորդ անհրաժեշտ նորութիւն, որ Ֆլորերը մացրեց  
բոմանի մէջ, — այս (ինչպէս յիշել ենք արդէն) հերոսների փոք-  
րացումն է:

Ֆլորերը մի առանձին ուշադրութիւն դարձրեց նկարագրու-  
թեան վրաց, որ կատարելագործւած «քանդակած» լեզվի շնորհիւ  
մնում է մինչեւ այսօր իրբե մի անխախտ հրաշակերտ արձան: